ԱՆՀԱՏ ԶԵՆՈՒԱՐԿԱՏԵՐ «ՇՈՒՇԱՆՆԱ ԴԱԴԻԿՅԱՆ ՎԱՀՐԱՄԻ»-Ն
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ՇՈՒՇԱՆՆԱ ԴԱԴԻԿՅԱՆ ՎԱՀՐԱՄԻ» 2022 թվականի հուլիսի 27-ի թիվ 01/8082 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ.**

1. Բավարարել Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 48Ա հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ՇՈՒՇԱՆՆԱ ԴԱԴԻԿՅԱՆ ՎԱՀՐԱՄԻ» հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Տիգրան Մեծի պող. թիվ 67/21 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. հուլիսի 28
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հուլիսի 2022 թվականի N 295

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 02 ՀՈՒՆԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 45
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 02 հունիսի 2022 թվականի թիվ 45 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի ղեկավարի 02 հունիսի 2022 թվականի «Վանաձոր քաղաքի Գ Լուսավորչի փողոց թիվ 47-1/11 հասցեում գտնվող, Գրիգոր Ֆելիքսի Իսահակյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակը և դրանով զբաղեցված հողամասը որպես չորս առանձին գույքային միավորներ տարանջատելու և փոստային հասցեներ տրամադրելու մասին» թիվ 45 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 2-րդ կետի «ա», «բ», «գ», «դ» ենթակետերի «28.22», «27.3», «25.85», «27.67» թվերը համապատասխանաբար փոխարինել «23. 22», «23.22», «22.05», «23.39» թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հուլիսի 2022 թվականի N 296

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՅՈՒ ՓՈՂՈՑ 3/2-2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ
ՈՐՊԵՍ ԵՐԵՔ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04082020-06-0038 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, կողմից տրված հողամասի հատակագծերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով և 32-րդ կետով **որոշում եմ**.

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց 3/2-2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 1, թիվ 2 և թիվ 3 հողամասերի հատակագծերի:

2. Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց 3/2-2 հասցեում գտնվող տարանջատված անշարժ գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա) 0.00139 հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ Վանաձոր Վանաձոր ք., Գ.Նարեկացու փողոց, 3/12 (հողամասի հատակագիծ թիվ 1):

բ) 0.0018 հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ Վանաձոր Վանաձոր ք., Գ.Նարեկացու փողոց, 3/13 (հողամասի հատակագիծ թիվ 2):

գ) 0.0018 հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ Վանաձոր Վանաձոր ք., Գ.Նարեկացու փողոց, 3/14 (հողամասի հատակագիծ թիվ 3):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040

vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հուլիսի 2022 թվականի N 297

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐ-ԴՈՍԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 45 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ
ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱՌՆԻԿ ԿԱՌԼԵՆԻ
ՀԱԿՈՐՅԱՆԻ ԵՎ ԹԱՄԱՐԱ ՀԱՄԼԵՏԻ ՀԱԿՈՐՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գառնիկ Կառլենի Հակոբյանի լիազորված անձ Գրետա Վարդանեսի Հակոբյանի և Թամարա Համլետի Հակոբյանի դիմումը, 21.01.1991թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 16.10.2014 թվականին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 4306 վկայագիրը, 11.08.2021 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2875 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 775-20210811-84-5304039), 30.04.2021 թվականին տրված 78 ԱՎ 0054558 լիազորագրի ուսերենից հայերեն թիվ 5510 թարգմանությունը (նոտարական ակտի կոդ: 437-20210526-67-5130088), թիվ 4306 հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 18.11.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-150/21 Ի եզրակացությունը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի կառուցած բնակելի տունը, շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական 618.0քմ հողամասին կից 50.1քմ մակերեսով հողամասերը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերմիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1957-1992թթ.-ին, դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 668.1քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Ճանաչել Գառնիկ Կառլենի Հակոբյանի (1/4) և Թամարա Համլետի Հակոբյանի (3/4) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Նար-Դոսի փողոց թիվ 45 հասցեում հասցեում գտնվող անհատական բնակելի տան կառուցման և

սպասարկման համար անհրաժեշտ օրինական 618.0քմ հողամասին կից 50.1քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Գառնիկ Կառլենի Հակոբյանի (1/4) և Թամարա Համլետի Հակոբյանի (3/4) ընդհաուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Նար-Դոսի փողոց թիվ 45 հասցեում գտնվող 668.1քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Վանաձոր քաղաքի Նար-Դոսի փողոց թիվ 45 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Նար-Դոս փողոց, թիվ 45/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. հուլիսի 29
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հուլիսի 2022 թվականի N 298

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ (ՆԱԽԿԻՆ ՍՎԵՐԴԼՈՎԻ) ՓՈՂՈՑ ԹԻՎ 49
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ԶԱԼԻԿՈՎԱՐՇԱԿԻ ԿՈՇԻՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ջալիկո Վաղարշակի Կոծինյանի (ծնված՝ 03.02.1939թ.) դիմումը, 10.08.1971թ. տրված գույքային թերթը, ԳԱՄՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 20.12.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-163/ 21 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Նարեկացու (նախկին Սվերդլովի) փողոց թիվ 49 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 265.3քմ մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1950-1994թթ:

Ղեկավարվելով՝ 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Ջալիկո Վաղարշակի Կոծինյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Նարեկացու (նախկին Սվերդլովի) փողոց թիվ 49 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 265.3քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել Ջալիկո Վաղարշակի Կոծինյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Նարեկացու (նախկին Սվերդլովի) փողոց թիվ 49 հասցեի 265.3քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Վանաձոր քաղաքի Նարեկացու (նախկին Սվերդլովի) փողոց 4-րդ փակուղի թիվ 23 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Գ. Նարեկացու փողոց, 49/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆՍՈՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. հուլիսի 29
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հուլիսի 2022 թվականի N 299

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՄԱՌԱՆՈՑԱՅԻՆ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 30 ՀԱՍՑԵԻ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Յանա Աշոտի Մկրտչյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08092020-06-0015 վկայականը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 16.06.2022թ. տրված թիվ ԱՏ-16062022-99-0113 քարտեզագրման նյութերի վերաբերյալ տեղեկանքը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 15.06.2022թ. տրված թիվ ԱՏ-15062022-06-0122 գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ տեղեկանքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.06.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր քաղաքի Ամառանոցային 1-ին փողոց 30 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած 0,03995հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հուլիսի 2022 թվականի N 300

ՎԱՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ԹԻՎ 426/239
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չերկասի փողոցի թիվ 3 շենքի թիվ 13 բնակարանի համասեփականատերերի լիազորված անձ Գայանե Գրիգորի Նավասարդյանի դիմումը, 17.03.2022 թվականին տրված թիվ 34 ԱԱ 3772631 (նոտարական ակտի կոդ: 773-20220614-64-5987059) լիազորագրի ռուսերենից թարգմանությունը, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Վանաձոր քաղաքի Բազումի անձնագրային բաժանմունքի 03.06.2022 թվականի թիվ 8/59-985 գրությունը, Նարինե Գրիգորիի Խաչատուրյանի 29.04.1992 թվականին տրված թիվ VIII-ՇՊ 258862 ծննդյան վկայականը և Լուսինե Գրիգորիի Խաչատուրյանի 15.02.1995 թվականին տրված թիվ VIII-ՇՊ 485830 ծննդյան վկայականը, ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝ որոշում եմ.

Վանաձոր քաղաքի Չերկասի փողոցի թիվ 3 շենքի թիվ 13 բնակարանի վերաբերյալ Վանաձորի քաղաքապետի 1998 թվականի հունիսի 12-ի «Բնակարանի սեփականաշնորհման մասին» թիվ 426/239 որոշման մեջ կատարել հետևյալ ուղղումները.

1. Որոշման նախաբանում «Գրիգորի Վլադիմիրի Խաչատուրյանը» բառերը փոխարինել «Գրիգորի Վլադիմիրի Խաչատուրյանը» բառերով:
2. Որոշման 1-ին կետի աղյուսակում «Խաչատուրյան Գրիգորի Վ.» բառերը փոխարինել «Խաչատուրյան Գրիգորի Վլադիմիրի» բառերով:
3. Որոշման 1-ին կետի աղյուսակում «Խաչատուրյան Լիաննա Զ.» բառերը փոխարինել «Խաչատուրյան Լիաննա Զանվելի» բառերով:
4. Որոշման 1-ին կետի աղյուսակում «Խաչատուրյան Նարինե Գ.» բառերը փոխարինել «Խաչատուրյան Նարինե Գրիգորիի» բառերով:
5. Որոշման 1-ին կետի աղյուսակում «Խաչատուրյան Լուսինե Գ.» բառերը փոխարինել «Խաչատուրյան Լուսինե Գրիգորիի» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՍԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 օգոստոսի 2022 թվականի N 302

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐՋԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 37-2/3 ՀԱՍՑԵԻ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԵՏՈՆԵ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ՔԱՆԴԵԼՈՒ
ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ
ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Վանաձոր համայնքի Գր. Լուսավորչի փողոց, թիվ 37-2/3 հասցեի հարավային մասում Վանաձոր համայնքին պատկանող հողամասը, առանց հողօգտագործման իրավունքի և առանց շինարարության թույլտվության, կառուցվել է բետոնե աստիճաններ, որով ծանրաբեռնված հողամասը փաստացի օգտագործվել է ապօրինի, քանի որ այդ հողամասի նկատմամբ չկա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված որևէ իրավունք, ուստի անհրաժեշտություն է առաջացել ազատել հիշյալ հողամասը՝ դրանով ծանրաբեռնված ինքնակամ շինարարությունից:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի բ) կետի՝ Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ըննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վանաձոր համայնքի Գր. Լուսավորչի փողոց, թիվ 37-2/3 հասցեի հարավային մասում Վանաձոր համայնքին պատկանող հողամասը, առանց հողօգտագործման իրավունքի և առանց շինարարության թույլտվության, կառուցվել է բետոնե աստիճաններ, որով ծանրաբեռնված հողամասը փաստացի օգտագործվել է ապօրինի, քանի որ այդ հողամասի նկատմամբ չկա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված որևէ իրավունք, ուստի անհրաժեշտություն է առաջացել ազատել հիշյալ հողամասը՝ դրանով ծանրաբեռնված ինքնակամ շինարարությունից:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Հայաստանի Հանրապետության քաղաքական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կառուցված և ինքնակամ կառույցների հաշվառման կարգ սահմանող Կառավարության որոշմամբ սահմանված կարգով հաշվառված ինքնակամ կառույցների վրա տարածվում են մինչև սույն

օրենքն ուժի մեջ մտնելը գործող ինքնական կառույցների օրինականացմանը վերաբերող կարգավորումները, այդ թվում՝ դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի դրույթները:

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի՝ ինքնական կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքեր, շինություններ կամ այլ կառույցներ, իսկ իսկ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ինքնական կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնական կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնական կառույցի օգտագործման ու ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնական կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները: Ուրիշի հողամասում գտնվող ինքնական կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման (ապամոնտաժման), իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին: Ուրիշի հողամասում ինքնական կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը: Վերը նշված հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ինքնական կառույցների առկայությամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման առանձնահատկությունները կարգավորվում են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով: Ինքնական կառույցները չեն կարող ճանաչվել օրինական, և դրանք ենթակա են քանդման, եթե կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնական կառույցները՝

ա. որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,
բ. որոնք կառուցված են հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Նույն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով սահմանված է, որ սույն կարգով նախատեսված ինքնական կառույցների օրինականացումը մերժվում է համապատասխան որոշմամբ, եթե դրանք չեն բավարարում քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և սույն կարգով սահմանված օրինականացման պայմանները: Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման հավելվածի 33-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնական կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին:

Համաձայն հողային օրենսգրքի 44-րդ հոդվածի, քաղաքացիների ու իրավաբանական անձանց հողամասերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքներն իրենց հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք է՝ օրենքով նախատեսված սահմանափակումների ու այլ պայմանների պահպանմամբ և հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը ծագում է պետական ու համայնքային հողերի մասնավորեցման, ժառանգման, առքուվաճառքի, նվիրատվության և հողի հետ կապված այլ գործարքների ու իրավաբանական փաստերի հիման վրա:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտն ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտն ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի՝ լուումներ չեն անցկացվում, եթե անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք ընդունելով հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 44-րդ հոդվածի 2-րդ մասի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ, 36-րդ, 38-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման պահանջները՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Զօրինականացնել Վանաձոր համայնքի Գր. Լուսավորչի փողոց, թիվ 37-2/3 հասցեի հարավային մասում կառուցված բետոնե աստիճանները:

2. Հանձնարարել Վանաձորի համայնքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի և իրավապահ մարմինների օժանդակությամբ ապամոնտաժել Վանաձոր համայնքի Գր. Լուսավորչի փողոց, թիվ 37-2/3 հասցեում կառուցված բետոնե աստիճանները:

3. Առաջարկել ՀՀ ոստիկանությանը Վանաձորի համայնքապետարանի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:

4. Վանաձորի համայնքապետի որոշմամբ նախատեսված ապամոնտաժման ու դրան զուգորդող այլ աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը՝ դատական կարգով բռնագանձել ինքնակամ կառույցն իրականացրած անձից:
5. Սույն որոշման պահանջների կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
7. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձորի համայնքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
8. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Վանաձորի համայնքապետարանի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 01
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հուլիսի 2022 թվականի N 301

ԷԼՄԵՐԻԴԱ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ
ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2546 ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱԿԵՐ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմը, ելնելով բողոքարկված վարչական ակտի նպատակահարմարության տեսանկյունից, քննարկեց Էլմերիդա Բաղդասարյանի լիազորված անձ Նաիրա Բաղդասարյանի կողմից 01 հուլիսի 2022 թվականին ներկայացված թիվ 02/6745 վարչական բողոքը՝ Վանաձոր համայնքի ղեկավարի 16 դեկտեմբերի 2021 թվականի «Էլմերիդա Վալադիմիրի Բաղդասարյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 2546 որոշում դեմ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 22.10.2021 թվականին տրված արձանագրության և գեկուցագրի համաձայն՝ Էլմերիդա Բաղդասարյանը (հասցե՝ ք. Աղայան փ., 74/32., 24) Վանաձոր քաղաքի Աղայան փողոց, թիվ 74/3 հասցեի բազմաբնակարան շենքի հարավարևմտյան մասում, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կատարել է ինքնակամ շինարարություն:

2021 թվականի հոկտեմբերի 22-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2021 թվականի նոյեմբերի 05-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և ներկայացել է Էլմերիդա Բաղդասարյանը (հիմք՝ 28.10.2021թ. ստացված փոստային անդորրագիր՝ ADLEO100710050AM):

Վարչական վարույթի լսումների ընթացքում Էլմերիդա Բաղդասարյանը հայտնել է, որ չի ընդունում իր կողմից վարչական իրավախախտում կատարելու փաստը, նշելով, որ ավտոտնակը գտնվում էր վատ վիճակում, տանիքը կաթում էր, ինչի մասին են վկայում Էլմերիդա Բաղդասարյանի կողմից վարչական մարմնին ներկայացված թվով չորս լուսանկարները:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 24 նոյեմբերի 2021 թվականին տրվել է զեկուցագիր, որի համաձայն, Էլմերիդա Բաղդասարյանին տրվել է 10-օրյա ժամկետ Վանաձոր քաղաքի Աղայան 74/3 շենքի հարավարևմտյան մասում գտնվող մետաղական ավտոտնակի ապամոնտաժման վերաբերյալ:

Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 24 նոյեմբերի 2021 թվականին Էլմերիդա Բաղդասարյանին է ուղարկվել թիվ 02/13712 գրությունը, որի համաձայն, նա պարտավոր է 10-օրյա ժամկետում ապամոնտաժել ավտոտնակը, այլապես կենթարկվի վարչական պատասխանատվության: Էլմերիդա Բաղդասարյանը վերոնշյալ ժամկետում չի ապամոնտաժել ավտոտնակը:

14 դեկտեմբերի 2021 թվականին Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից տրված արձանագրության և զեկուցագրի հիման վրա՝ Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 16 դեկտեմբերի 2021 թվականին ընդունվել է «Էլմերիդա Վլադիմիրի Բաղդասարյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 2546 որոշումը:

29 դեկտեմբերի 2021 թվականին Էլմերիդա Բաղդասարյանը դիմել է Վանաձոր համայնքի ղեկավարին, խնդրելով տրամադրել 16.12.2021 թվականի թիվ 2546 որոշման համար հիմք հանդիսացած բոլոր փաստաթղթերի պատճենները:

03 մարտի 2022 թվականին Էլմերիդա Բաղդասարյանին է տրամադրվել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցված վարչական վարույթի նյութերի պատճենները (հիմք՝ 11.03.2022թ. փոստային անդորրագիր՝ ADLEO102634064AM):

11 փետրվարի 2022 թվականին Էլմերիդա Բաղդասարյանը, չխախտելով Վանաձոր համայնքի ղեկավարին վարչական կարգով բողոքարկելու ժամկետները, բողոքարկել է Վանաձոր համայնքի ղեկավարի 16 դեկտեմբերի 2021 թվականի «Էլմերիդա Վլադիմիրի Բաղդասարյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 2546 որոշումը:

16 փետրվարի 2022 թվականին Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը թիվ 02/1007 գրությամբ հայտնել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ) ենթակետի համաձայն՝ վարչական մարմիններ են՝ տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետի համաձայն՝ վարչական կարգով բողոք կարող է ներկայացվել ակտն ընդունած վարչական մարմին: 16 դեկտեմբերի 2021 թվականին «Էլմերիդա Վլադիմիրի Բաղդասարյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 2546 որոշումը ընդունվել է Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից, հավելելով, որ Վանաձոր համայնքում 2021 թվականի դեկտեմբերի 22-ից չկա համայնքի ղեկավար:

01 հուլիսի 2022 թվականին Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարին է դիմել Էլմերիդա Բաղդասարյանի լիազորված անձ Նաիրա Բաղդասարյանը, դիմումին կցելով 30 հունիսի 2022 թվականի թիվ 2384 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 775-20220630-90-6040977), թվով 1 լուսանկար և վարչական բողոքի լուսապատճենը:

Նաիրա Բաղդասարյանը դիմումում նշել է, որ ներկայացվել է վարչական բողոք, և քանի որ Վանաձոր համայնքը չի ունեցել համայնքի ղեկավար և հնարավոր չի եղել ընթացք տալ վարչական բողոքին, խնդրել է ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 16 դեկտեմբերի 2021 թվականի «Էլմերիդա Վլադիմիրի Բաղդասարյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 2546 որոշումը:

2022 թվականի հուլիսի 01-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2022 թվականի հուլիսի 14-ին հրապիրվել են վարչական վարույթի լուծումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և ներկայացվել է Էլմերիդա Բաղդասարյանի լիազորված անձ Նաիրա Բաղդասարյանը:

Վարչական վարույթի լուսմների ընթացքում էլմերիդա Բաղդասարյանի լիազորված անձ Նաիրա Բաղդասարյանը հայտնել է, որ վերանորոգումից հետո պատրաստ են օրինականացնել վերանորոգված մետաղական դարպասները:

Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 25 հուլիսի 2022 թվականին տրված զեկուցագրում նշվել է, որ կրկնակի ուսումնասիրելով էլմերիդա Բաղդասարյանին պատկանող Աղայան թիվ 74/3 բազմաբնակարան շենքի բակում տեղադրված ավտոտնակի տարածքը, պարզվել է, որ քաղաքացին կատարել է շարժական ավտոտնակի կոսմետիկ նորոգում, որը, համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշման 4-րդ հավելվածի 1-ին կետի, հանդիսանում է շինթույլովություն չպահանջող գործունեություն: Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը առաջարկվել է անվավեր ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 16.12.2021 թվականի թիվ 2546 որոշումը և ամբողջությամբ բավարարել էլմերիդա Բաղդասարյանի լիազորված անձ Նաիրա Բաղդասարյանի վարչական բողոքը:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-70-րդ հոդվածներով, 76-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 19 մարտի 2015 թվականի թիվ 596-Ն որոշման 4-րդ հավելվածի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Էլմերիդա Վլադիմիրի Բաղդասարյանի վարչական բողոքը ամբողջությամբ բավարարել՝ Վանաձոր համայնքի ղեկավարի 16 դեկտեմբերի 2021 թվականի թիվ 2546 որոշումը ճանաչելով անվավեր:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
 Բ. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 օգոստոսի 2022 թվականի N 303

**ՎԱՆԱԶՈՐ ԶԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ԹԱՂԱՄԱՍ ՈՒԿՐԱԽՆԱԿԱՆ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ
 1/2-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԷՐԻԿ ԷՂՈՒԱՐԴԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ
 ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԵՔ
 ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ
 ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Էրիկ Էղուարդի Մարգարյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06082020-06-0016 վկայականը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված հողամասերի հատակագծերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամաս Ուկրաինական պողոտա թիվ 1/2-1 հասցեում գտնվող Էրիկ Էղուարդի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը՝ համաձայն «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված թիվ 1 , թիվ 2 և թիվ 3 հատակագծերի:

2. Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամաս Ուկրաինական պողոտա թիվ 1/2-1 հասցեում գտնվող տարանջատված գույքերին տրամադրել փոստային հասցեներ.

ա) 21.0 քմ մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ Վանաձոր Վանաձոր քաղաք, Ուկրաինական փողոց, 1/5 հողամաս (հատակագիծ թիվ 1).

բ) 59.0 քմ մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ Վանաձոր Վանաձոր քաղաք, Ուկրաինական փողոց, 1/6 հողամաս (հատակագիծ թիվ 2)

գ) 80.0 քմ մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ Վանաձոր Վանաձոր քաղաք, Ուկրաինական փողոց, 1/7 հողամաս (հատակագիծ թիվ 3):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 օգոստոսի 2022 թվականի N 304

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի
<<ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 7 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 19-ի <<Վանաձոր համայնքի 2022 թվականի գնումների պլանը հաստատելու մասին>> թիվ 7 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 01
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040

vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 օգոստոսի 2022 թվականի N 305

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 14 ՀՈՒՎԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 220
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սրբուհի Պետրոսի Բաբաջանյանի լիազորված անձ Պետրոս Գրիգորի Բաբաջանյանի դիմումը, 01.06.2022թ. տրված թիվ 11670 (նոտարական ակտի կոդ: 545-20220601-79-5953009) լիազորագիրը, Վանաձոր համայնքի ղեկավարի 14 հուլիսի 2022 թվականի թիվ 220 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 21.07.2022 թվականի թիվ Կ-21072022-06-0033 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի ղեկավարի 14 հուլիսի 2022 թվականի «Վանաձոր քաղաքի Նարեկացու փող թիվ 67 հասցեում գտնվող, Սրբուհի Պետրոսի Բաբաջանյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված արտադրամասը օրինականացնելու և փոստային հասցեն հաստատելու մասին» թիվ 220 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

Որոշման նախաբանում «բնութագիրը» բառից հետո լրացնել «ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 27.06.2022թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022MRQJGT)» բառերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 օգոստոսի 2022 թվականի N 306

«ԱԳԱԹ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԱԳԱԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Վահե Թադևոսյանի 2022 թվականի հուլիսի 29-ի թիվ 01/8232 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ**.

1. Բավարարել Երևան քաղաքի Զաքարիա Քանաքեռցու փող. թիվ 68/4 հասցեում գործող «ԱԳԱԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Վահե Թադևոսյանի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Մյասնիկյան փող. թիվ 3/1-5 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 օգոստոսի 2022 թվականի N 307

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԱՁՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ
ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐԴԳԵՍ ՀՐԱՆՏԻ
ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարդգես Հրանտի Թովմասյանի (ծնված՝ 07.12.1941թ.) դիմումը, 10.01.1987թ. տրված տեխնիկական անձնագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված 23.06.2022թ. թիվ ՎՆ 1-49/22 Ի եզրակացությունը, ՀՀ «Լոռու մարզ» նոտարական տարածքի 12.01.2022 թվականի իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելիության իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու մասին թիվ 77 որոշումը (նոտարական ակտի կոդ: 763-20220109-216-5628559), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 3 հասցեում կառուցած բնակելի տունը, շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական 125.0քմ հողամասին կից 279.2քմ մակերեսով հողամասերը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1939-1978թթ.-ին, դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 404.2քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վարդգես Հրանտի Թովմասյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 3 հասցեում գտնվող անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 125.0քմ հողամասին կից 279.2քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Վարդգես Հրանտի Թովմասյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի
Լազյան փողոց թիվ 3 հասցեում գտնվող 404.2քմ մակերեսով հողամասի վրա գտնվող
բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված
հատկազոտով:

4. Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 3 հասցեի բնակելի տանը տրամադրել փոստային
հասցե՝ ք. Վանաձոր, Ս. Լազյան փողոց, 3/3 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. օգոստոսի 01
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040

vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 օգոստոսի 2022 թվականի N 308

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ 6/34 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ
ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍՈՒՍԱՆՆԱ ՍԵՆԻԿԻ
ՄԻՆԱԿՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսաննա Սենիկի Միխակյանի 20.08.2021թ. թիվ 12075 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12072022-06-0123 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Ա. Մյասնիկյան փողոց 6/34 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 18.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 16.24քմ) ավտոտնակը 67880 (վաթսուներեք հազար ութ հարյուր ութսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 18.0քմ մակերեսով հողամասը 448000 (չորս հարյուր քառասունութ հազար) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սուսաննա Սենիկի Միխակյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Սուսաննա Սենիկի Միխակյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 օգոստոսի 2022 թվականի N 309

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ 23/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԼՎՈՂ,
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ
ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳԱՅԱՆԵ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՌԱՖԱԵԼՅԱՆԻՆ
ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021
ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2527 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գայանե Սերյոժայի Ռաֆաելյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23112021-06-0056 վկայականը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Շինարարների փողոց 23/5 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 19.35քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 17.85քմ) ավտոտնակը 38110 (երեսունուր հազար հարյուր տասը) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 32.8քմ մակերեսով հողամասը 145700(հարյուր քառասունհինգ հազար յոթ հարյուր) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Գայանե Սերյոժայի Ռաֆաելյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Գայանե Սերյոժայի Ռաֆաելյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առովաճառքի պայմանագիր:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 13-ի «Վանաձոր քաղաքի Շինարարների փողոց 23/5 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված ավտոտնակը և դրանով զբաղեցված հողամասը Գայանե Սերյոժայի Ռաֆաելյանին օտարելու մասին» թիվ 2527 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 օգոստոսի 2022 թվականի N 310

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 28 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԹԻՆԱ ԳԱԳԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թինա Գագիկի Գրիգորյանի (ծնված՝ 25.03.1952թ.) դիմումը, 29.11.2021թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի (նոտարական ակտի կոդ: 594-20211102-84-5491251) թիվ 5818 վկայագիրը, 14.02.1990թ. տրված տեխնիկական անձնագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 26.07.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-83/22 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Կիլիկիայի փողոց, թիվ 28 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 424.5քմ և կից 136.2քմ մակերեսներով հողամասերը և դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 560.7քմ(424.5+136.2): Անհատական բնակելի տունը կառուցվել է 1990-2020 թթ.-ին: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Թինա Գագիկի Գրիգորյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Կիլիկիայի փողոց, թիվ 28 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 424.5քմ մակերեսով հողամասին կից 136.2քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

